

ՀԱՆԳԻՍՏ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՊԻՄԵՆԻ

1990 թվականի մայիսի 3-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենը:

Հանգուցյալ Պատրիարքը ծնվել է 1910 թվականի հուլիսի 23-ին Մոսկվայի նահանգի Բոգորոդսկ քաղաքում: 1927 թվականից ընդգրկվել է հոգևոր ծառայության և հետզհետե բարձրանալով՝ 1957 թվականին ձեռնադրվել է եպիսկոպոս, եղել է միտրոպոլիտ Ռուսաստանի տարբեր թեմերում, իսկ 1971-ին օծվել որպես Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք: Նորին Սրբության գահակալության տարիներին Ռուս Ուղղափառ Եկեղեցին մեծ ծաղկում ապրեց, որովհետև հանգուցյալ Պատրիարք Սրբազանը հատուկ ուշադրություն դարձրեց Ռուս Եկեղեցու ներքին բարեկարգման և մանավանդ եկեղեցականների հովվական գործունեության, նրա օրոք բազմաթիվ եկեղեցիներ բացեցին իրենց դռները հավատացյալների առաջ, և բարձր հնչեց Աստուծո անունը:

Այդ օրերին Մայր Աթոռից բացակայում էր Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը եկեղեցի օրհնելու սրբազան առաքելությամբ գտնվում էր Բելգիայում:

Վազգեն Ա Հայրապետը ցավակցական հետևյալ հեռագիրը հղեց Ռուս Եկեղեցու Բարձր Սինոդին.

ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ

Մոսկվա, Պատրիարքարան—Դանիլյան վանք

Այսօր խոր վշտով իմացանք, որ Պիմեն Պատրիարքը իր հոգին ավանդել է ի Տեր՝ սուգի մեջ թողնելով Համայն Ռուսիո Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: Տխուր սրտով Ձեր սուգին է մասնակցում Հայաստանյայց

Առաքելական Եկեղեցին և անձամբ Մենք: Երկար տարիներ վայելում էինք հանգուցյալ Պատրիարքի եղբայրական սերն ու բարի զգացումները:

Խորապես ափսոսում ենք, որ Հայրապետական այցելությամբ գտնվում ենք Բելգիայում և պիտի չկարողանանք անձնապես բերել Մեր վերջին եղբայրական ողջույնը: Մեր Եկեղեցու կողմից թաղման կմասնակցեն Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և Գարեգին եպս. Ներսիսյանը:

Մնում ենք աղոթող Ռուս Պրավոսլավ պատմական Եկեղեցու հետագա ծաղկումի և փառքի համար:

Թող ողորմածն Աստված քաղցրությամբ ընդունի Պիմեն Պատրիարքի բարի և արդար հոգին երկնքի հավերժական խաղաղության մեջ:

Խորին ցավակցությամբ և աղոթյուք՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Բրյուսել,
7 մայիսի 1990 թ.